
**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԻՒԻԿՑԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIII Դ. ՎԵՐՋԻՆ – XIV Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ս.

Կիլիկյան Հայաստանի պատմության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը թեմական կառույցի հարցն է, քանզի հայոց եկեղեցուն վիճակված էր մեծ դեր խաղալ երկրի հասարակական–քաղաքական կյանքի և հոգևոր–մշակութային միջավայրի կազմակերպման գործում:

Աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում կփորձենք պարզաբանել Կիլիկյան Հայաստանի հոգևոր նվիրապետության կազմակերպման հետ աղերսվող մի շարք հիմնախնդիրներ, որոնք ընդգրկում են XIII դ. վերջը, երբ կաթողիկոսությունը Հռոմկլայից տեղափոխվեց Սիս, մինչև 1342 թ. Սսի ժողովը: Հոգևոր նվիրապետության կազմակերպման որոշ սկզբունքներ առավել ամբողջական պարզաբանելու համար անհրաժեշտ ենք համարում քննել երեք տարաբնույթ վկայություններ, որոնք հաջորդաբար արտացոլում են հետագա զարգացման երկու շրջափուլերը: Առաջին տեղեկությունը վերաբերում է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (973-992) ժամանակաշրջանին. «Իսկ յաւուրն տեառն Խաչկայ հայրապետի հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբ արեւմտից մինչեւ ձեռնադրեալ նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց եւ ի Տարսոն Կիլիկեցոց եւ ի Ուլնիա եւ յամենայն գաւառս յայնոսիկ»¹: Անհնարին է պատկերացնել, որ գործունէնք հաստատուն հատկանիշների շրջանակներում ձևավորված կառույցի հետ: Պարզապես Կիլիկիայում հայ բնակչության աճը պայմանավորեց, որ ստեղծվեն թեմեր, որոնց առաջնահերթ խնդիրը հոգևոր–մշակութային ինքնապահպանման կազմակերպումն էր: Հայոց եկեղեցին ձգտում էր իր ազդեցության շրջանակներում պահել սեփական դավանանքը կրող մարդկանց, քանզի նրանց զբաղեցրած միջավայրերը կազմում էին եկեղեցաքաղաքական այլ միավորների բաղկացուցիչ մասեր: Այս քաղաքականությունը համատեղում էր երկու փոխկապակցված սկզբունքներ. ա) էթնիկական ընդհանրության ինքնապահպանման հասարակական պատասխանատվությունը, երբ աշխատում էին հայ բնակչությանը գերծ պահել հունական և ասորական եկեղեցիների ազդեցությունից. բ) հոգևոր–մշակութային նոր տարածքների յուրացումը: Չպետք է կարծել, որ վերոհիշյալ տարածքներում հայերը գերակայում էին, այլ բնավորվել էին որպես էթնիկ փոքրամասնություն, ուստի թեմերի կազմակերպումը նշանակում էր հոգևոր նոր տարածքների յուրացում:

Երկրորդ տեղեկությունը վերաբերում է Հռոմկլայի 1178 թ. ժողովին, որտեղ Կիլիկյան Հայաստանը ներկայացնում էր հինգ թեմ. Տարսոնի արքեպիսկոպոսությունը (6), Անարգաբայի (22), Սելևկիայի (23), Մամեստիայի (25), Կոկիսոնի (310)

¹ **Ստեփանոս Ասողիկ Տարօնեցի**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 258:

եպիսկոպոսությունները²: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հռոմկլայի ժողովը *համահայկական բնույթ ունեւր, ապա Գիլիկյան Հայաստանի ներկայացրած* հինգ թեմը բավական խոսուն վկայություն է, որ հայկական նոր պետականության շրջանակներում հայոց եկեղեցին ուներ բավական ամուր կառույցներ: Խոսքը ոչ միայն տարածքային կազմակերպման, այլև աստիճանակարգության մասին է:

Երրորդ վկայությունը արտացոլում է XII դ. վերջին ձևավորված իրավիճակը. «Նախ սկիզբն արացուր յառաջնորդաց. Տէր Գրիգոր կաթողիկոս՝ որ մականուն Ապիրատ: Տէր Դաւիթ՝ արքեպիսկոպոս Մսսայ, և առաջնորդ Արքայկաղնոյ: Տէր Յոհաննէս՝ արքեպիսկոպոս Սոյ, և գտէր Դրագարկուն: Տէր Մինաս՝ արքեպիսկոպոս Երուսաղէմի: Տէր Յուսէփ՝ արքեպիսկոպոս Անտիոքայ, և տէր Յետունց վանիցն: Տէր Կոստանդին՝ արքեպիսկոպոս Անաւարգոյ, և տէր Կաստաղոնին: Տէր Վարդան՝ արքեպիսկոպոս Լամբրոնին, և առաջնորդ Սկևռուն: Տէր Ստեփաննոս՝ արքեպիսկոպոս Տարսոնի, և տէր Մլիճոյն: Տէր Թորոս՝ եպիսկոպոս Սելևկիոյ: Տէր Գրիգոր՝ եպիսկոպոս Կապնուն, և տէր Արիգնին: Տէր Աստուածատուր՝ եպիսկոպոս Մեծքրուն: Տէր Յոհաննէս՝ եպիսկոպոս Սանվէլէայ: Տէր Կոստանդին՝ եպիսկոպոս Փիլիպոսայ: Տէր Ստեփաննոս՝ եպիսկոպոս Բերդուսին: Տէր Մխիթար՝ եպիսկոպոս Ընկուզուտին: Եւ շատ վարդապետք և հարք վանաց և քահանայք»³:

Դասաշարից պարզ երևում է, որ Գիլիկյան Հայաստանի թեմական կառույցը ձեռք էր բերել նոր բովանդակություն, քանզի նա միայն հոգևոր իշխանությամբ չէր օժտված, ինչպես Խաչիկ Արշարունի կաթողիկոսի ժամանակ: Եկեղեցու շրջանակներում իրագործվում էին նաև պետական կառավարման որոշ գործառնություններ, ուստի պատահական չէ, որ հայկական իշխանության կազմավորմանը զուգահեռ՝ ճշգրտվում էր հոգևոր նվիրապետության կառուցվածքը և հավատացյալների բաժանումը աշխարհականների ու հոգևորականների:

Եթե Սմբատ Սպարապետի վերոբերյալ դասաշարից բացառենք «...Եւ շատ վարդապետք և հարք վանաց և քահանայք» հատվածը, ապա թեմական կառույցում կունենանք. ա) կաթողիկոսություն, բ) արքեպիսկոպոսություն, գ) եպիսկոպոսություն: Անվանացակին վերաբերող ժամանակաշրջանում Հռոմկլայի հայոց կաթողիկոսությունը Գիլիկյան Հայաստանի հոգևոր նվիրապետությունը գլխավորում էր այն չափով, ինչ չափով միաժամանակ Մեծ Հայքի և գաղթօջախների հայոց եկեղեցին, ուստի առաջինն ուներ նաև իր թեմական կառույցը գլխավորող աստիճան, որը խնդրո առարկա ժամանակաշրջանում Տարսոնի արքեպիսկոպոսությունն էր. «...ընդ ձեռամբ հոգևոր վերակացութեան տեառն իմոյ Ներսիսի արքեպիսկոպոսի սրբոյ, որ այժմ կայ ի գլուխ սուրբ և հռչակաւոր այս ուխտի միաբանութեան ժողովոյ և հովուէ գմայրաքաղաքն Տարսոն՝ հանդերձ գաւառաւք

² Զամչեանց Մ., Հայոց պատմութիւն, հ. Գ, Ե., 1984, էջ 132:

³ Սմբատայ Սպարապետի երթօր շէթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 99-100:

Կիլիկիոյ...»⁴: Հետագայում այս իրավունքները անցնում են Սսի արքեպիսկոպոսությանը:

Եթե փորձենք ներկայացնել թեմական կառույցի պատկերը, ապա կստացվի.

Ա) Հայոց կաթողիկոսություն, Բ) (ա) Տարսնի, իսկ հետագայում Սսի արքեպիսկոպոսություն, Բ) (բ) Արքեպիսկոպոսություններ, Գ) Եպիսկոպոսություններ:

Չնավորված իրավիճակը որոշակի փոփոխությունների ենթարկվեց, երբ կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Միս: Ըստ այդմ էլ անկախ «Կաթողիկոս ամենայն հայոց» հորջորջումից, այն դառնում էր Կիլիկյան Հայաստանի հոգևոր նվիրապետությունը գլխավորող կառույց: Առաջին դեպքում Ա և Բ համակարգերի միջև առաջնությունը պատկանում էր կանոնական հարաբերություններին, իսկ երկրորդ դեպքում գերակշռող է դառնում վարչաթեմականը, այսինքն՝ կաթողիկոսությունը ներառվում է Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական համակարգում:

Հայոց պետականության շրջանում Կիլիկյան Հայաստանում ձևավորվել էր հինգ արքեպիսկոպոսություն՝ Միս-Դրազարկ, Տարսն-Մլիճ, Լամբրոն-Սկևռա, Անավարզա-Կաստաղոն, Մամեստիա-Արքակաղին:

Չքննարկելով այն տեսակետը, որ թեմական կազմակերպումը սովորաբար հանգրվանում էր վարչաքաղաքական կառուցվածքում աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում, փորձենք ճշգրտել արքեպիսկոպոսության տեղն ու դերը Կիլիկյան Հայաստանի նվիրապետական կառույցում:

ա) Դրազարկի թեմ. Խնդրո առարկա ժամանակաշրջանում Միս քաղաքի արքեպիսկոպոսները բարձր դիրք էին զբաղեցնում Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական միջավայրում: Սսի արքեպիսկոպոսական ասյանն օժտված էր բարձրագույն եկեղեցական դատարանի իրավասությամբ: Հանրագումարի բերելով մայրաքաղաքի արքեպիսկոպոսների վերաբերյալ առկա տվյալները՝ Ղ. Ալիշանը կազմել է թեմացանկը. «...և են ծանօթքն ինձ եպիսկոպոսունք Ստոյ,

1193 - 8. Յովհաննէս (յետոյ կաթողիկոս).

1261. Թորոս արքեպիսկոպոս, քարտուղար արքունի.

1267. Յակոբ.

1301. Յովհաննէս.

1307 - 14. Կոստանդին.

1320. Կոստանդին Լամբրունեցի (յետոյ կաթողիկոս).

1342. Բարսեղ.

1372. Յովհաննէս արքեպիսկոպոս»⁵:

Միս քաղաքի առաջնորդները սովորաբար հանդես էին գալիս «...և յառաջնորդութիւն քաղաքիս»⁶ ձևով:

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե - ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 268:

⁵ Ալիշան Ղ., Միսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 221:

⁶ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Ե., 1950, էջ 354:

Նվիրապետական կառույցում Սիսը ներկայանում էր նաև որպես արքեպիսկոպոսական թեմ, որի առաջնորդարանը գտնվում էր Դրազարկում: Ընդհանուր հայտարարի բերելով Դրազարկի առաջնորդների մասին եղած տեղեկությունները՝ Ղ. Ալիշանը կազմել է արքեպիսկոպոսների ցանկը.

- «1113 Գեորգ Մեղրիկ.
- 1113 – 1127 Գիրակոս Գիտնական վարդ.
- 1173 – 1182 Սամուել.
- 1198 Յովհաննէս Մեծաբարոյն.
- 1200 Հեղի – Հեթում Լամբրունեցի
- 1218 Յովհաննէս վերստին (կաթողիկոսն).
- 1220 Բարսեղ.
- 1241 – 1275 Բարսեղ արքայեղբայր.
- 1301 Յովհաննէս.
- 1323 Կոստանդին (Գ կաթողիկոս).
- 1341 Բարսեղ.
- 1372 Յովհաննէս.»⁷:

Անվանացանկը կարելի է լրացնել.

- 1290 Թորոս
- 1295 Կոստանդին

բ) Տարսուն – Մլիճ. Տարսունը հնուց ի վեր համարվում էր Գիլիկիայի եկեղեցական կարևորագույն կենտրոններից մեկը. «Յետ այնք ըստ հին եկեղեցական վիճակագրութեան՝ երեք արքեպիսկոպոսական նահանգք էին Գիլիկիոյ, Տարսուն կամ՝ Ա Գիլիկիա, Անագարբա կամ՝ Բ Գիլիկիա, և Սելևկիա կամ Իսաւրիա, յորս միահամուտ եպիսկոպոսք 40. որոց անուանք և դասք կարեն մեզ ընծայել աշխարհագրական ծանօթութիւնս, յոր սակս և կարգեմք աստանօր.

Ա Գիլիկիա. – Տարսուն
Պոմպէուպօլիս
Սեբաստիա
Կոռիկոս
Ատանա
Ադուսիա
Մալոս»⁸

Թեմի եկեղեցաքաղաքական բարձր դիրքը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Տարսունը Գիլիկյան Հայաստանի երկրորդ (ծիսակարգային) մայրաքաղաքն էր: Եթե սրան ավելացնենք Տարսունի հետ կապված քրիստոնեական այն ավանդույթը, որ այստեղ է ծնվել Պողոս առաքյալը, ապա ամեն ինչ պարզ է դառնում: Այս դեպքում պատահական չէ, որ 1307 թ. Սսի ժողովին Տարսունը ներկայացրել էր երկու մասնակից... «Յովաննէս արքեպիսկոպոսն Տարսունի (2), Ստեփաննոս եպիսկոպոս աստուածապահ քաղաքին Տարսունայ (5)»⁹:

⁷ Ալիշան Ղ., Սիսուան, էջ 234:

⁸ Նույն տեղում, էջ 66:

⁹ Գալանոս Կղ., Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, Կ. Ի, Հռոմ, 1650, էջ 459:

Տարսոնի արքեպիսկոպոսների ցանկը Ղ. Ալիշանը ներկայացնում է այսպես.

«972 – 90 Ա. Ա. կարգեալ ի Խաչկայ Ա կաթողիկոսէ.

1173. Գրիգոր Ապիրատ (կաթողիկոսն).

1175 – 1198. Ներսէս Լամբրունեցի.

1198. Ստեփաննոս.

? Ներսէս.

1230 ? – 50. Գրիգոր.

1307 – 16. Յովհաննէս.

+ 1320. Ստեփաննոս.

1324. Բարսեղ.

1342. Վարդան.»¹⁰:

զ) Լամբրոն–Սկևռա. Լամբրոնի դերը Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական կյանքում առավել նշանակալից էր XII դ. երկրորդ կեսին–XIII դ. սկզբին՝ կապված Օշինյանների գործունեության հետ: Հետաքրքիր է այն փաստը, որ Լամբրոնի առաջնորդները չեն մասնակցել Սսի, Աղանայի, Սսի ժողովներին, այն դեպքում, երբ Սսի 1307թ. ժողովի մասնակիցների դասաշարում հիշատակվում է Մարկոս վարդապետ Սկևռացին: Կարելի է ենթադրել, որ Լամբրոնի թեմը ներառվել էր Տարսոնի արքեպիսկոպոսության մեջ: Նման եզրակացության հիմք է այն հանգամանքը, որ Տարսոնը և Լամբրոնը ներառվել էին քաղաքական մեկ համակարգում. «...եւ պարոն Ալինախ, տէրն Լամբրոնի և Տարսոնի...»¹¹: Առաջնորդներից հայտնի են.

1263 Մխիթար

1272 – 1292 Միմեոն

1299 Կոստանդին

1314 Կոստանդին Պեհեսնցի

դ) Անարզարա – Կաստաղոն. Ըստ հին թեմագրության՝ Անավարզայի վիճակն ուներ հետևյալ պատկերը.

Բ Կիլիկիա. – Անազարբա

Մոպսուեստիա

Եգեաս (Այաս)

Եպիփանիա

Ալեքսանդրիա

Հռոսոս

Եռինուպոլիս

Փլաիաս

Կաստաբալա¹²:

Որպես Անավարզայի առաջնորդներ՝ հիշվում են.

1263 Հակոբ

1283 – 1293 Գրիգոր

1307 – 1317 Հովհաննէս

¹⁰ Ալիշան Ղ., Միսուան, էջ 271:

¹¹ Գալանոս Կղ., էջ 460, 504:

¹² Ալիշան Ղ., Միսուան, էջ 66:

1326 Հակոբ

1342 Ստեփանոս

Պատկերն ամբողջացնելու համար բերենք նաև կաթոլիկ թեմագրությունը.

Ա. Տարսոն

Բ. Անարգաբա

Սեբաստ

Եպիփանիա

Մալլոս

Ալեքսանդրիա

Տինե կամ Թինա

Փոքր Եռինուպոլիս

Կոռիկոս

Կամբիսոպոլիս

Պոտանտե

Փլաիաս

Հռոսոս

Կաստաուալ

Եգեաս

Միս¹³:

ե) Մամեստիա–Արքակաղին. Որպես առաջնորդներ՝ հիշատակվում են.

1266 – 1270 Սիոն

1280 Տիրատուր

1284 Ստեփանոս

1306 Կոստանդին

1312 – 1316 Հովհաննես

1332 Ստեփանոս

1342 Բարսեղ

Հավանաբար որոշակի ժամանակահատվածում արքեպիսկոպոսական թեմ է եղել նաև Գոները, որը միավորել է Մոլևոնը և Բարձրբերդը. «Առ խնդրոյն համառօտիս տէր Յոհաննէս Արքաեղբայր, եպիսկոպոս նահանգաց աստուածապահ զըղեկին Մոլևոնի և մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հոշակելի սուրբ ուխտին Գոներոյ...»¹⁴:

Թեմական կազմակերպման հաջորդ միավորը եպիսկոպոսությունն էր: Նախ բերենք բազմավաստակ հայագետ Ղ.Ալիշանի կազմած թեմացանկը. «Եպիսկոպոսականք.

Ատանա

Մոլևոն, ի Գոներ

Այաս

Մաշկեւոր

Բարձրբերդ

Բերդուս

Կապան, յԱրեգնի

Մանվելնայ, տեղի անձանօթ

Ծամնդաւ

Յոհաննց, անձանօթ

Կոպիտառ

Փիլիպպոսեան, անձանօթ

Սելեկիա

Մեծքար

Ընկուզուտ

Մաշարդ, անձանօթ տեղի

Հարգան

Տիանա¹⁵:

¹³ Նոյն տեղում, էջ 67:

¹⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա.Մաթևոսյան, Ե., 1984, էջ 487:

¹⁵ Ալիշան Ղ., Միսուան, էջ 65:

Ուոթելի մասին, որին Ղ. Ալիշանը համարում է անձանոթ, վկայություն կա 1214 թվակիր հիշատակարանում. «Արդ գրեցաւ սայ ի զարդ եւ ի պայծառութիւն եկեղեցոյ եւ ի վարժ նորավարժ ուսումնասիրաց, ի նահանգս Ուոհայոյ, ի գաւառս Շպղթան, ի հոյակապ եւ յակնաւոր գիւղս Ուոթելի կոչեցեալ»¹⁶:

Ադանա. Չնայած այն հանգամանքին, որ այս նշանավոր թեմի առաջնորդները ինդրո առարկա ժամանակաշրջանում արքեպիսկոպոսի աստիճան չստացան, սակայն բավական ակտիվ դեր էին խաղում Կիլիկիայի հասարակական-քաղաքական և եկեղեցական կյանքում: Թեմակալ եպիսկոպոսներից հայտնի են.

1307 – 1317 Ստեփանոս

1318 Հակոբ

1342 Գրիգոր

Այսա. Առաջնորդներից հայտնի են.

1307 Հովհաննես

1342 Հովհաննես

Բարձրբերդ. Թեմակալ եպիսկոպոսներից հայտնի են.

1307 – 1317 Ստեփանոս

1342 Բարսեղ

Կապան. Առաջնորդներից հայտնի են.

1307 Բարսեղ

1317 Հակոբ

1342 Ներսես

Թեմը բավական ակտիվ դեր էր խաղում Կիլիկյան Հայաստանի եկեղեցական-քաղաքական կյանքում, որը պայմանավորված էր նաև նրանով, որ Կապանը արքայատիրոջների մեջ էր մտնում: Սսի 1307թ. ժողովի աշխարհականների դասաշարում առաջինը նշված է. «Պարոն Օշին տէրն Կապնոյ»¹⁷:

Ծամնդավ. Տեղադրության մասին պահպանվել է. «Մերձ յաստուածապահ դղեկին Պաղրաս, ի սահմանս Անտիոք քաղաքի, առ ստորոտ լերինս Փոքու, որ կոչի Ծամընդաւ...»¹⁸:

Կոպիտառ. «...ի լեռնապատ անապատիս, որ անուն Դրագարկ յորջորջի, առ ստորոտով մեծի լերինն Տաւրոսի, որ է մերձ յանմատոյց ամուրն, որ Յունական լեզուան Կոպիտառայ անուանի»¹⁹: Առաջնորդներից հիշատակվում է Սիմոն եպիսկոպոսը, որը մասնակցել է Սսի 1307 թ. ժողովին և ստորագրել է Սահմանադրության տակ: Սսի և Ադանայի ժողովներին մասնակցած աշխարհականների ցուցակում ութերորդ տեղը զբաղեցնում է Կոպիտառի տեր Օշինը:

Սելևկիա. Առաջնորդներից հայտնի են.

1178 Բարսեղ

1198 Թորոս

Ամենայն հավանականությամբ ինդրո առարկա ժամանակաշրջանում թեմը ներառվել էր Տարսոնի արքեպիսկոպոսության կազմում:

¹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 86:

¹⁷ Գալանոս Կղ., էջ 460:

¹⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 158:

¹⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե - ԺԲ դդ., էջ 155:

Ընկուզուտ. Թեմակալ եպիսկոպոսներից հայտնի են.

1198 Մխիթար

1212 Կոստանդին

Հարգան. «Իսկ հիւսիսակողմն Մսոյ ոչ անմեկին մասն բնիկ Կիլիկիոյ, այլ ի ճահ մերոյս այժմեան տեսութեան, Հաճին վիճակն է, որ թուի կոչեցեալն Հարգան ի ժամանակս տերութեան Հայոց, յորում և եպիսկոպոսական թեմ էր»²⁰:

Առաջնորդներից հայտնի են.

1307 Անդրեաս

1311 «...սրբասնեալ եպիսկոպոսն Հաճոյն տէր Ստեփանոս»²¹:

Մոլուն. Թեմի մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել 1283 թ. արձանագրված հիշատակարանում. «Որոյ անուն Գրիգոր կոչի,

Որ գաւառաւ է Մլունցի...»²²:

Թեմակալ եպիսկոպոսներից հայտնի են.

1260–1290 Հովհաննես Արքաեղբայր

1317 Ներսես

Մխիթար

Մաշկևոր. Թեմի մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել 1279թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում. «...զլուսաւոր, զմաքրափայլ Աւետարանս, ի Փոսանահանգ գաւառս Կիլիկեցոյ, ի կաթողիկոսանիստ միաբանիս, ի վանս Մաշկաւոր կոչեցեալ, մերձ առ գերամաքուր սուրբ ուխտս որ Դրագարկ յորջորջի...»²³: Առաջնորդներից հայտնի են.

1307 Թորոս

1322 Պողոս

1325 Հայրապետ

1342 Գրիգոր

Բերդուս. Թեմի եպիսկոպոս Ստեփանոսը հիշատակվում է Լևոն Բ թագահանդեսի մասնակիցների դասաշարում: Հետագայում Բերդուսի ոչ մի առաջնորդ չի հիշատակվում, որը իրավունք է տալիս եզրակացնելու. ա) հավանաբար թեմը ներառվել էր այլ միավորի մեջ. բ) ընդգրկել է ընդամենը Բերդուս բերդը, և աննշան էր նրա խաղացած դերը Կիլիկյան Հայաստանի եկեղեցական կյանքում, ըստ այդմ էլ այլևս չի հիշատակվում հետագա շրջանի աղբյուրներում:

Մանվելնայ. Թեմակալ եպիսկոպոս Հովհաննեսը հիշատակվում է Լևոն II-ի թագադրության հանդեսին մասնակցած հոգևորականների դասաշարում: Հետագայում թեմի չհիշատակվելը խոսում է այն մասին, որ կամ նրա անվանումը փոխվել էր, կամ էլ այն ներառվել էր այլ համակարգի մեջ:

Յոհնանց. 1281 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում պահպանված տեղեկությունը հավանաբար վերաբերում է Յոհնանց թեմին. «...աստանաւր

²⁰ Ալիշան Ղ., Միսուան, էջ 61:

²¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 78:

²² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 542:

²³ Նույն տեղում, էջ 493:

յանգ ելեալ աւարտեցաւ Աւետարանս այս ի սուրբ ուխտիս՝ ի հռչակաւոր վանս Յոհանց...»²⁴:

Փիլիպպոսեան. Թեմակալ եպիսկոպոս Կոստանդինը հիշատակվում է Լևոն II-ի թագադրության հանդեսին մասնակից հոգևորականների դասաշարում:

Մեծքար. Թեմի մասին արժեքավոր տեղեկություն կա 1214 թ. ընդօրինակված Աստվածաշնչի հիշատակարանում. «Բայց գրեցաւ սա յանապատիս որ կոչի Մեծաքար, ընդ հովանեաւ սրբոյ եւ փառաւոր եկեղեցոյս որ յանուն Տիրամարն, եւ գերահռչակ սրբոց վկայիցս Պրոբոսի, Տարագոսի, եւ Անդրոնիկոսի, յառաջնորդութեան ուխտիս տէր Աստուածատրոյ՝ սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոսի, ի գաւառիս որ Մանուտ կոչի, եւ բարեպաշտ իշխանիս մերոյ Գեորգեա՝ իշխեցողի անապատիս»²⁵: Առաջնորդներից հայտնի է նաև.

1272 Հակոբ

Մաշարդ. Վարդան եպիսկոպոսը հիշատակվում է 1307 թ. Սսի ժողովի արձանագրությունը ստորագրողների անվանացանկում. «*Vartanus episcopus Maschiarti*» ձևով: Հավանաբար Մ. Չամչյանը ճիշտ չի վարվել, 1342 թ. Սսի ժողովի մասնակից Հովհաննես եպիսկոպոսին համարելով Մաշարդի առաջնորդ²⁶: Դասաշարում այն ներկայանում է. «*Dominus Johannes de Mathekar*» ձևով²⁷:

Տիանա. թեմը ներառում էր Տիանա քաղաքը և հարակից շրջանները: Առաջնորդներից հայտնի են.

1307 Ներսես

1342 Գրիգոր

Կիլիկյան Հայաստանում գոյություն ունեին մի քանի եպիսկոպոսական թեմեր ևս, որոնք տեղ չեն գտել Ղ. Ալիշանի կազմած ցանկում:

Ցախուտ. Գավառի մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել 1276 թ. գրանցված հիշատակարանում. «Բայց եղև զրաւ սորա ի գաւառիս Ցախուտ կոչեցեալ, յաշխարհիս Կիլիկեցոց, յանապատի որ կոչի Փոս...»²⁸: Ցախուտ թեմը հավանաբար ներառված էր Բարձրբերդի եկեղեցական համակարգում, ուստի նրա եպիսկոպոսները չէին մասնակցում XIV դ. առաջին կեսի ժողովներին: Առաջնորդներից հայտնի է.

1329 Ստեփանոս

Անդրիասեանց. 1269 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Գրիգորն արձանագրել է. «...եւ աւարտեցաւ ի գերահռչակ ուխտս Անդրիասանց մերձ յանառիկն դղեակ Բարձր անուն կոչեցեալ, յառաջնորդութեանն տեառն Սիմեոնի...»²⁹: Առաջնորդներից հայտնի է նաև.

²⁴ Նույն տեղում, էջ 527:

²⁵ Նույն տեղում, էջ 88:

²⁶ **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 341:

²⁷ **Mansi J. D.**, *Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 25, Graz – Austria, 1961, p. 1187.*

²⁸ Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 464:

²⁹ Նույն տեղում, էջ 380:

1264 Պողոս

Թիլ Համտուն. Թեմակալ եպիսկոպոս Դավիթը մասնակցել է Սսի 1342 թ. ժողովին և ստորագրել. «*Dominus David Camando*»³⁰. Առաջնորդարանը հավանաբար եղել է Անե բերդը, որի թեմակալը Սսի 1307 թ. ժողովում ստորագրել է. «*Vartanus episcopus Ani*»³¹: Այն, որ Վարդանը չէր կարող լինել Անի քաղաքի եպիսկոպոս, դիպուկ նկատել է Մ. Օրմանյանը. «...իսկ Անիի արքեպիսկոպոս ըսուածը, եթե բուն Անիի արքեպիսկոպոսն ըլլար՝ 25-րդ տեղը չէր թողուէր...»³²:

Հավանաբար եպիսկոպոսական թեմ է եղել նաև Ճկեր գավառը. «...ի ծովեզերու ովկիանոսի, ի գաւառս որ Ճկեր անուանի...»³³:

Առանձին եպիսկոպոսական թեմ է եղել նաև Ռորանը, որի առաջնորդ Հայրապետը մասնակցել է Սսի 1307 թ. ժողովին:

Ընդհանուր հայտարարի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ Կիլիկիա տեղափոխված հայ բնակչության հոգևոր-մշակութային կյանքը կազմակերպելու և էթնիկական նույնականությունը պահպանելու համար հայոց եկեղեցին ձեռնամուխ եղավ թեմական կառույցների կազմակերպմանը: Սա բավական բարդ գործընթաց էր, որն ըստ ժամանակագրության կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջինն ընդգրկում է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի ժամանակաշրջանից մինչև Ռուբինյանների իշխանության հաստատումը: Թեմական կազմակերպման երկրորդ փուլը ներառում է Ռուբինյաններից մինչև Հռոմկլայի անկումը, իսկ երրորդը՝ մինչև Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը:

СОЗДАНИЕ АРМЯНСКИХ ЦЕРКОВНЫХ ЕПАРХИЙ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ В КОНЦЕ XIII-ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XIV ВВ.

АРУТЮНЯН Г. С.

Резюме

В целях организации религиозно-культурной жизни переселившихся в Киликию армян армянская церковь предприняла создание епархий. Уже при католикосе Хачике Аршаруни (973-992) в Киликии были созданы две епископские епархии. После создания княжества Рубинянов церковь была включена в государственную систему, и завершился процесс формирования епархий в виде архиепископств и епископств. На территории Киликийской Армении было создано 5 архиепископских и более двух десятков епископских епархий.

³⁰ Mansi J. D., vol. 25, p. 1187.

³¹ Mansi J. D., vol. 25, p. 135.

³² Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, մասն Ա, Պէյրուր, 1960, էջ 1785:

³³ Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 96: